ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 25 - Ա
24 հուլիսի 2013թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հուլիսի 10-ի N 743- Ա որոշումը

կարգադրում եմ՝

1. Մարզի Այգուտ համայնքի ակտիվ սողանքային գոտում գտնվող բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրներն ուսումնասիրելու և ֆինանսական աջակցություն տրամադրելու հարցերը քննարկելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

   Մուշեղյան Յու. - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ, նախագահ

   Բուդումյան Խ.. - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ

   Ղազարյան Ն. - մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ

   Բիձյան Հ . - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի վարիչ

   Սարգսյան Ս. – ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի Ճամբարակի տեղական գանձապետական բաժնի պետ /համաձայնությամբ/

   Պետրոսյան Ս. – ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության Գեղարքունիքի տարածքային բաժնի պետ /համաձայնությամբ/

   Գաբրիելյան Հ. – մարզի Այգուտ համայնքի ղեկավար /համաձայնությամբ/

2. Հանձնաժողովին՝ ֆինանսական աջակցություն ստանալու հավակնող անձանց աջակցություն տրամադրելու գործընթացն ավարտել ս/թ դեկտեմբերի 20-ին: Կարգադրության կատարման ընթացքի մասին երկշաբաթյա պարբերականությամբ զեկուցել մարզպետին:
3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Հակոբյանին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ